

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԱՐՉԱԿՈՒՄ

Բառապաշարի շերտերն ունեն ոճական որոշակի արժեք, հերոսներին անհատականացնելու կամ հեղինակի խոսքը ոճավորելու յուրահատուկ դեր։ Արևմտահայ գրականության և հրապարակագրության ակնառու դեմքերից է Անդրանիկ Ծառուկյանը, որն իր արծակ երկերում ըստ անհրաժեշտության տեղ է տալիս խոսակցական լեզվի բարբառային ու զրաբարյան տարրերին, օտարաբանություններին։ Բառերի ընտրության ու կիրառության մեջ են դրսևորվում հեղինակի ստեղծագործական ու լեզվաոճական վարպետությունը, ինչպես նաև նրա ոճին բնորոշ առանձնահատկությունները։

Արծակագրի ստեղծագործություններում հատկապես գերակշռում են օտարաբանությունները։ Հարկ է նշել, որ, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենը խուսափում է օտար բառերի ներմուծումից՝ փոխարենը ստեղծելով նորակազմ բառեր։ Հ. Աճառյանը վկայում է, որ արևմտահայերը «երբ ստիպված լինեին էլ գործածել մի օտար բառ, գրում էին շեղատառով, նոտրագիր կամ մինչև անգամ եվրոպական տառերով, եթե բառը եվրոպական է։ Այս դեպքում նրանք նման էին հին հռոմայեցիներին, որ սիրում էին հունական փոխառությունները գրել հունարեն տառերով՝ մի որևէ լատին գրության մեջ»¹։ Ո. Սաքալետոյանն էլ նշում է, որ «Օտարաբանություններից խուսափելու և դրանց հայերեն համարժեքները ստեղծելու և գործածելու միտումը պատճառ է դարձել, որ արևմտահայ բառարանները առհասարակ տեղ չեն տալիս փոխառություններին և օտարաբան ձևերին։ Մինչդեռ մամուլն ու գեղարվեստական գրականությունը լի են նման բազմաթիվ բառերով»²։

Օտարաբանությունները՝ հեղինակի արծակ երկերի բառապաշարի առանձնահատուկ շերտն են կազմում։ Դրանք հիմնականում փոխառություններ են *արևելյան լեզուներից՝ թուրքերենից՝ աֆ* (ՍԵՄ, 138), *եավորում* (ԵՀ, 48), *եաթախ* (ԵՀ, 48), *հանըմ* (ՍԵՄ, 181), *աթշ* (ՎԱ, 296), *պէյ* (ԵՀ, 41), *պարսկերենից՝ իւան* (ՍԵՄ, 122), *մզկիթ* (ՍԵՄ, 199), *արաքերենից՝ բամամ* (ՍԵՄ, 190), *խավակա* (ՍԵՄ, 60), *մոմիա* (ԵՀ, 36), *նալին* (ԵՀ, 24)։ Սրանցից շատերը

¹ Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1955, էջ 401

² Սաքալետոյան Ո., Արեւմտահայերէն-արեւմտահայերէն նոր բառարան, Երեւան, 2011, էջ 9.

գործածվում են լեզվի բարբառային ու խոսակցական տարբերակներում՝ առանց օտարամուտ ինքնու գիտակցության:

Եվրոպական լեզուներից կատարված փոխառություններ են՝ ենթրիկ (ՎԱ, 27), քրանգիթ (ՅԵՆԸ, 11), ժանտարս (ՍԵՄ, 35), կառաժ (ՅԵՆԸ, 308), կօմպրես (ՆՅՆՅ, 205), միրաժ (ՎԱ, 75), շառլաթան (ԵՅ, 35), պրովաքացիա (ՍԵՄ, 269), պրօպլեմ (ՅԵՆԸ, 137), ռեքլամ (ՆՅՆՅ, 172), սիլուրե (ՎԱ, 168), սկանտալ (ՍԵՄ, 200), վիլլա (ՍԵՄ, 58), տոագետիա (ԵԶ, 42), տիալեկտիկա (ՆՅՆՅ, 81), տենդենցիոզ (Մ, 27), փարատոքս (ՆՅՆՅ, 285), փիքնիք (ՎԱ, 234), փոլիթիկոս (ՍԵՄ, 103), բոմփլեքս (ԱՅԵԼՄ, 166), ֆապրիկ (ՅԵՆԸ, 253), ֆօլքլօր (ՆՅՆՅ, 242), ֆինիշ (ԱՅԵԼՄ, 77):

Ա Ճառուկյանի վեպերում, հուշագրություններում գործածված օտարաբանությունները հայատառ ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, արաբերեն բառեր են՝ շեղատառ գրությամբ, հազվադեպ «եվրոպական տառերով»։ ինչպես՝ «Ամոնց արծակը՝ իր *մօնէմոն*ներով, *հալիցինացի*աներով, *տրազետիս*ներով, պահ մը սպառնացին նեխել ու անպիտան բանի մը վերածել հայ լեզուն» (ԵԶ, 42), «Գիտակից ու խելացի մերձեցում մը՝ որմէ գուրկ էին իր նախորդները, ինչպես և յետնորդները, անշուշտ՝ ի վնաս իրենց արուեստին, որ ջրախառն կաթի պէս երբեք չդիմացաւ քննդատութեան *pèse-laître*ին» (ԵԶ, 43), «- *Միթոյնկ* ալսօր բացարձակապէս արգիլուած է պատերազմի մասին խօսիլ» (ՍԵՄ, 81), «Ծօ դուն ինչու՞ բանաստեղծ եղեր ես, կրնայիր փոլիթիկոս ըլլայ...» (ՍԵՄ, 103):

Գրողի երկերում կան թուրք, արաբ հերոսներ, որոնց խոսքը հազեցած է բնորոշ բառերով ու արտահայտություններով: Դեղինակը հաճախ տեղ է տալիս ոչ թե մեկ-երկու առանձին բառի, այլ մի ամբողջ նախադասության՝ համապատասխան լեզվի հայատառ շարադրանքով՝ եվ որպեսզի վերջիններիս արտահայտչական արժեքն ավելի ընդգծվի, փակագծում նշվում է դրանց հայերեն համարժեքները, օրինակ՝ թուրք հերոսների խոսքը՝ «- Փեք կիւզել, փեք կիւզել (Շատ աղուոր, շատ աղուոր)՝ ժպտելով պատասխանեց Թալաթ ու նստան հաշուեկշիռի» (ՍԵՄ, 101), «- Մենտուի, օղլում եօքսա սնետալը սըն (Մամտուի, տղաս, թէ ոչ սիրահարուած ես)» (ՍԵՄ, 105), «- «*Դայտէ, վազդդ եօք* (Շտապեցէք, ժամանակ չկայ)» (ՍԵՄ, 211), «Եավաշ - եավաշ, տահա վազդթ վար... Կամաց կամաց, դեռ ժամանակ կայ...» (ԵՅ, 96) Արաբերեն բառերով ու արտահայտություններով հեղինակը անհատականացրել է արաբ հերոսներին, օրինակ արաբ ճանապարհորդի խոսքը՝ «- Ի պուս ի՞տաք, լադ ռուի՜ ծեղդ պագնեմ, մի՛ երթար» (ՅԵՆԸ, 30), կամ՝ «- *Եա խրապ պէ՛րքաք, շու՜ հայտա*... (տու նդ չքանդուի, ի՛նչ է ասիկա)» (ՅԵՆԸ, 22)

Թուրքական կյանքի ու կենցաղի, մահմեդական աշխարհի իրական վերարտադրմանն են օգնում այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք բնութագրում են նրանց՝ մաշալլահ (ՍԵՄ, 156), սեվքիթ (ՍԵՄ, 191), ապտես (ՍԵՄ, 12), մեպուս (ՍԵՄ, 38), կեավուռ (ՍԵՄ, 38), պեւիկ (գօրամաս) (ՍԵՄ, 70), սիւրկին (աքսոր) (ՍԵՄ, 71), գայմազամ պէ (քաղաքապետ) (ՍԵՄ, 148):

Երբեմն էլ հեղինակն օտար, բայց տիպական բառը կիրառելիս այն վերցնում է չափերտների մեջ, օրինակ՝ «Շատ անելի մեծ չարիքներ տեսած ու անցուցած են, եւ վստահօրէն այս մէկն ալ կրնան «լիկվիտացնել», իրենց հասկցած ձեւով» (ՆՅՆՅ, 239), «Ու զինք «էքսէնդրիք» հոգեվիճակի մատնող սուգի պատրուակով՝ երեք տուփ գլանիկ ծխէ գիշերուան մը մէջ ... » (Մ, 28), «Յամառ եւ բութ աշակերտի ընթացք մըն է թերեւս նման խրատներ լսելէ ետք կրկին խառնել զգայուն «մեխանիզմը», ... » (ՆՅՆՅ, 74) կամ փակագծում տալիս է դրանց հայեցի տարբերակը՝ « - Ծրագրել էի այս անգամ երկու հազար հինգ հարիւով վերադառնալ եւ մի *մաշին* գնել (ինքնաշարժ մը)» (ՆՅՆՅ, 96):

Օտար բառերը հաճախ են գործածվում հայերենին բնորոշ բառակազմական եղանակներով ու քերականական օրինաչափություններով՝ ընդունելով համապատասխան ձևաբանական արտահայտություն, ինչպես՝ էտլվայսներու (ԵՅ, 167), թելեվիզիօնը (ՆՅՆՅ, 56), շօֆտօրները (ՆՅՆՅ, 57), պրիօմները (ՆՅՆՅ, 73), սիստեմին (ՆՅՆՅ, 74), մաշինը (ՆՅՆՅ, 96):

Անշուշտ, օտար բառերի օգտագործումը գեղարվեստական խոսքում արդարացված է: Դրանց փոխարեն հայերեն համարժեքների գործածությունը նույն արժեքը չէր ունենա, և խոսքը կզրկվեր այն յուրահատուկ երանգից, որ տալիս են օտար բառերը:

Ոճական որոշակի նկատառումներով Ա. Ծառուկյանը օգտվել է նաև գրաբարից: Գրաբարյան բառամթերքը շատ քիչ տեղ է գրավում գրողի ստեղծագործությունների բառապաշարում: Գրաբարյան բառեր ու բառաձևեր ասելով նկատի ունենք այն բառերը, որոնք զուտ գրաբարյան բառեր են կամ գրաբարյան կազմություններ ու քերականական ձևեր: Ե՛րբ է, դրանք դուրս չեն մնացել հայերենից, սակայն գեղարվեստական գրականության մեջ գործածվում են ոճական նպատակով, ինչպես՝ «Տէր, օգնէ նուաստիս, վասնզի դժուարին է հարկը որ պարտ է ինձ տալ, եւ պարկեշտ ու անաչառ մնալու ստիպողութեան դէմ՝ խոչընդոտներ են սէրն ու բարեկամութիւնը» (ՍԵՄ, 306), «Պարզ մնալու տաժանքէն ետք, ահաւասիկ պարզութիւնը բնորոշելու տագնապ մը՝ Շաւարշ Միսաքեանի մահուան քսանամեակին առիթով» (ՍԵՄ, 306):

Բերված օրինակներում ընդգծված են գրաբարյան բառերը, որոնք հանդիպում են հեղինակի խոսքում: Դրանք թեև ունեն համապատասխան համա-

նիշները՝ որովհետև (վասնզի), ահա (ահաւասիկ), սակայն հեղինակը նախընտրում է գրաբարը՝ խոսքին որոշակի ոճական երանգ հաղորդելու համար:

Հիմնականում հանդիպում ենք առ, ի, ընդ, ըստ, գ, ց նախդիրների գործածությանը: Չնայած ամեն մի հոլով ունի բազմաթիվ կիրառություններ, այնուամենայնիվ գործողության և առարկաների միջև եղած բոլոր հարաբերությունները միայն հոլովների միջոցով հնարավոր չէ արտահայտել: Հոլովների այդ պակասը մասամբ լրացնում են նախդիրները՝ սպասարկելով հոլովման համակարգին³: Գործածվելով տարբեր հոլովների հետ՝ նախդիրներն արտահայտում են քերականական զանազան նշանակություններ:

Հատկապես մեծ թիվ են կազմում ի նախդրով կազմությունները: Ի նախդիրը գործածվում է տրական, հայցական, բացառական հոլովների հետ՝ արտահայտելով ժամանակի, նպատակի և այլ իմաստներ: Այսպես, դրվելով անորոշ դերբայի մոտ, ցույց է տալիս ժամանակ՝ « - Ի ծագել (ծագելու ժամանակ) արեգական կորնչին աստեղը, զոչեց դիմաւորելով նորեկ Արշալիը իր հմայիչ տիկնոջ հետ... » (ՎԱ, 223), տրական հոլովի հետ արտահայտում է ժամանակ՝ «Այդպէս էր, ի հնուց (հին ժամանակներից) անտի» (ՎԱ, 17), « Պէյրութ ժամանեց ընկեր Հրօն՝ ի ծայն փողոյ եւ թմբկի (փողի և թմբկի ծայնի ժամանակ)» (ՎԱ, 103), բացառական հոլովի հետ հանդես է գալիս որպես հոլովակազմիչ՝ «Մէկը երբ կուսակցութեան մը անդամ կ'արծանագորուի և կը դառնայ կուսակցական, ի յառաջագունէ (նախապես) ճշդած կ'ըլլայ (ներողութիւն այս խժալուր զօեհկաբանութեան համար) թէ որոշած է դառնալ եւ մնալ նաեւ ... «կողմնակցական» (ՎԱԱ, 4) :

Նշված կազմությունների գործածումը հեղինակի կողմից նպատակային է ու տեղին և անիմաստ է սրանց փոխարինումը քերականական այլ կազմություններով, քանի որ այդ դեպքում կթուլանա խոսքի ուժգնությունը, արտահայտչականությունը:

Ի նախդրով քարացած կապակցություններ են ի վեր (ՎԱԱ, 4), բացէ ի բաց (ՄԵՄ, 102):

Համեմատաբար քիչ են այն բառերը, որոնք կազմված են ց նախդրով, որ նշանակում է *մինչև, մինչև մի տեղ, մինչև մի ժամանակ*՝ ցայս (ՄԵՄ, 91), ցայսդ (ՄԵՄ, 91), ցարդ (ԱՅԵԼՄ, 34), ցկեանս (ՎԱ, 198), ցմահ (ՎԱԱ, 8):

Հազվադեպ են հանդիպում առ, ընդ, գ նախդիրներով կազմություններ՝ ընդ հուր եւ ընդ սուր (ՎԱ, 103), դերանուններ՝ զայն (ԵԶ, 39), զմեզ (ԱՅԵԼՄ, 35):

³ Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Երևան, 2004, էջ 249:

Ծառուկյանի արծակում թեև հազվադեպ, բայց հանդիպում ենք գրաբարյան կազմության բնավոր արտահայտությունների գործածության, ինչպես՝ «- Մինչեւ որ իրիկունը տուն չմտցնեմ, չեմ բաժնուիր իրմե: Ատկե ետք, ընկեր Վարդան, արիւն ձեր ի գլուխ ձեր...» (ՎԱ, 43), «Որ՝ նմանը գտանէ զնմանը, գիտէինք» (ՆՅՆՅ, 232), «Ի սկզբանէ էր Կուսակցութիւնը եւ Կուսակցութիւնը ամեն ինչ էր» (ՎԱ, 8), «Չախ» երեւիլը հաւանաբար օգնէր իրեն: Բայց կը մոռնար պատուիրանը - «**խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ**» (ԵՅ, 182):

Գրաբարյան ձևերի այսօրինակ կիրառությունները վկայում են, որ դրանք հեղինակն օգտագործում է երբեմն անուղղակիորեն, երբեմն էլ միտումնավոր՝ խոսքն առավել արտահայտիչ դարձնելու միտումով:

Բառապաշարի ոչ կենսունակ (ոչ գործուն) ոլորտին են պատկանում բարբառային բառերը, որոնք սովորաբար դուրս են գրական (եզվի մորմայի սահմաններից, ոչ այնքան մատչելի են հանրության համար, ունեն գործածության ավելի նեղ շրջանակներ, հիմնականում գործածվում են առօրյա խոսակցական և գեղարվեստական ոճերում՝ համապատասխան երանգներով և հեղինակային նպատակադրմամբ:

Փոքրաթիվ է բարբառային բառերի քանակը թե հեղինակի, թե հերոսների խոսքում՝ պայմանավորված իրադարձությունների միջավայրով, ստեղծագործությունների նյութով: Գրողը կերպարի խոսքին երանգավորում տալու նպատակով վերջինիս լեզուն տեղ-տեղ է միայն բարբառայնացնում՝ հատկապես այդ խոսքին լրացուցիչ ոճական երանգներ հաղորդելու նպատակով: Այսպիսի դեպքերում բարբառի ոճական արժեքը ավելի մեծ է լինում: Այսպես՝ «- Ի՞նչ ախմախ - ախմախ կը խօսիս» (ՄԵՄ, 220), «- Ինչ կ'ըլլաս, Անդրանիկ, իմ **խաթրիս** համար րո՛ւ այս մէկը» (ՄԵՄ, 167), «- ... Ամուր բռնենք իրար, թե չէ զատ զատ կ'առնեն, եւ հում հում կ'ուտեն...» (ԴԵՆԵ, 113), «- Ես շէյս մը դարձած էի ո՛ր ... վրաս - գլուխես զատ, ծէնս ալ փոխեցի, հայվանը չհասկցաւ ... ես մէջ մը պան մը չուզեմ ...» (ԵՅ, 49) և այլն:

Ընդգծված բարբառային բառերի փոխարեն կարող էր օգտագործվել գրական հիմար (ախմախ), ի սեր (**խաթր**), հեռու (զատ), ծայն (ծէնս), անմիտ (հայվան) բառերը: Բայց դրա հետևանքով թերևս կթուլանար նախադասության արտահայտչականությունը, խոսքը կդառնար անկենդան, չոր ու անարտահայտիչ:

Ծառուկյանի արծակի բարբառային բառերի մեծ մասը հատուկ է կոճերի (Պոլիս, Վան, Դամշեն, Անթաստիա և այլն) բարբառներին՝ թաղար (ՆՅՆՅ, 10), խսիր (ՄՉՄ, 73), խլլոտ (ԵՅ, 10), ճիկեար, (ԵԶ, 42), պողալ (ՎԱ, 111), խածնել (ՄՉՄ, 8) և այլն: Սի մասն էլ գործածական է ինչպես *ու՛մ* (Արարատյան,

Թբիլիսի, Ղարաբաղ, Նոր Զուղա և այլն), այնպես էլ *կը* ճյուղի բարբառներում (Պոլիս, Վան, Կարին, Նոր Նախիջևան և այլն), ինչպես՝ անկար (ԵՂ, 119), խալաթ (ՎԱ, 186), քահել (ՆՅՆՅ, 34), տփել (ՍԵՍ, 57):

Պետք է նշել, որ նշված օրինակներն այսօր իրենց տարածվածությամբ և գործածության հաճախականությամբ անցել են ժողովրդախոսակցական լեզվին:

Հաճախ բարբառային բառերը բերվում են բնորոշվող երևույթին, հատկանիշին ընդգծված հեզմական, բացասական կամ արհամարհական երանգ հաղորդելու համար, օրինակ՝ « - Պարապ բան են այս բոլորը, այդ խլեզները չեն համարձակի» (ՍԵՍ, 93), « - Զո՞ւ բաժինդ ուր է, *չախալ*» (ՍՉՍ, 172), « - Չգի՞ր ասում են, *ախմախ*, ձգի՛ր...» (ՅԵՆՃ, 67):

Այդուհանդերձ, որքան էլ բարբառային բառերն ու քերականական ձևերը գեղարվեստական ոճում թույլատրելի, հանձնարարելի իրողություններ են ոճական այս կամ այն նպատակներով, այնուամենայնիվ բարբառային տարրերի գործածության ժամանակ գրողը պետք է դրսևորի չափի, ճաշակի գեղագիտական մոտեցում:

Ինչպես նկատում ենք, բազմաշերտ է Ա. Ծառուկյանի բառապաշարը: Տարբեր բառաշերտերի պատկանող բառերն աչքի են ընկնում իրենց ոճական բազմազան դրսևորումներով կերպարների և հեղինակային խոսքի կառուցվածքային համակարգում, համահունչ են այս կամ այն թեմային, ծառայում են ոճական կոնկրետ խնդիրների իրականացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1955:
2. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Երևան, 2004
3. Սաքապետոյան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան. Երեւան, 2011:

Stylistic characteristic of layer of vocabulary in Andranik Tsarukyan's prose

The study of a language and style of a literary work begins from the lexicological level of the language, that is from the analysis of the vocabulary.

In this article is studied the layer of the vocabulary of Andranik Tsarukyan's prose, especially dialectical and Old Armenian words, barbarisms, their stylistic role and meaning in author's and hero's speech.